Արձանագրություն N 4
ՋԿ-ԳՀԾՁԲ-24/1-Ն ծածկագրով գնանշման հարցման ընթացակարգի գնահատող հանձնաժողովի նիստի

ք. Երևան 01 փետրվարի 2024թ.

Մասնակցում էին՝
Հանձնաժողովի նախագահ՝ Ա. Մխիթարյանը,
Հանձնաժողովի անդամներ՝ Ս. Ասրյանը, Է. Բադալյանը, Գ. Մանուկյանը և Ն. Ավետյանը
Քարտուղար՝ Ս. Գալստյան:

Մասնակից ընկերությունների կողմից ներկայացված շտկման փաստաթղթերի ուսումնասիրության վերաբերյալ

Ջրային կոմիտեի կարիքների համար ոռոգման համակարգերում վերանորոգման (կառուցման) աշխատանքների նախագծերի պատրաստման, ծախսերի գնահատման ծառայությունների ձեռքբերման ՋԿ-ԳՀԾՁԲ-24/1-Ն ծածկագրով ընթացակարգի մասնակիցներ **«Ակադեմիկոս Ի.Վ. Եղիազարովի անվան ջրային հիմնահարցերի և հիդրոտեխնիկայի ինստիտուտ» ՓԲԸ-ն**, **«ԱՐՄՍՏՐՈՅ» ՍՊԸ-ն**, **«ԲԻՄ ԻՆԺԵՆԵՐԻՆԳ» ՍՊԸ-ն, «ԴԵԼՏԱՇԻՆ» ՍՊԸ-ն, «Մոդուլ» ՍՊԸ-ն, «ՀԳՇՆ» ՍՊԸ-ն և «Շինմաստեր» ՍՊԸ**-ն՝ սահմանված ժամկետում ներկայացրել են գնահատող հանձնաժողովի 26.01.2024թ. թիվ 3 որոշմամբ արձանագրված անհամապատասխանությունների շտկման վերաբերյալ փաստաթղթեր: Ներկայացված փաստաթղթերով մասնակիցներ **«Ակադեմիկոս Ի.Վ. Եղիազարովի անվան ջրային հիմնահարցերի և հիդրոտեխնիկայի ինստիտուտ» ՓԲԸ-ն**, **«ԱՐՄՍՏՐՈՅ» ՍՊԸ-ն**, **«ԲԻՄ ԻՆԺԵՆԵՐԻՆԳ» ՍՊԸ-ն, «ԴԵԼՏԱՇԻՆ» ՍՊԸ-ն, «Մոդուլ» ՍՊԸ-ն, «ՀԳՇՆ» ՍՊԸ-ն և «Շինմաստեր» ՍՊԸ**-ն շտկել են արձանագրված անհամապատասխանությունները:

Հանձնաժողովի որոշումը

ՋԿ-ԳՀԾՁԲ-24/1-Ն ծածկագրով ընթացակարգի մասնակիցների հայտերով ներկայացված (այդ թվում շտկմամբ) փաստաթղթերի ուսումնասիրության արդյունքում գնահատող հանձնաժողովը որոշեց.

1. ՋԿ-ԳՀԾՁԲ-24/1-Ն ծածկագրով ընթացակարգի ընտրված մասնակիցներ հայտարարել.
   - 1-ին, 2-րդ, 4-րդ, 7-րդ, 10-րդ 12-րդ, 17-րդ և 18-րդ չափաբաժիններ - **«Մոդուլ» ՍՊԸ-ին**,
   - 3-րդ և 6-րդ չափաբաժիններ - **«ՀԳՇՆ» ՍՊԸ-ին**,
   - 9-րդ, 11-րդ և 13-րդ չափաբաժիններ - **«ԲԻՄ ԻՆԺԵՆԵՐԻՆԳ» ՍՊԸ-ին**,
   - 14-րդ և 20-րդ չափաբաժիններ - **«ԴԵԼՏԱՇԻՆ» ՍՊԸ-ին,**
   - 19-րդ չափաբաժին - **«Շինմաստեր» ՍՊԸ-ին:**
2. Հրապարակել հայտարարություն պայմանագիր կնքելու որոշման մասին:

«Գնումների մասին» ՀՀ օրենքի 10-րդ հոդվածի համաձայն՝ ՋԿ-ԳՀԾՁԲ-24/1-Ն ծածկագրով ընթացակարգի 1, 2, 3, 4, 6, 7, 9, 10, 11, 12, 13, 14, 17, 18, 19, 20 չափաբաժինների համար անգործության

ժամկետ է սահմանվում պայմանագիր կնքելու մասին որոշման հայտարարությունը հրապարակելու օրվան հաջորդող օրվանից մինչև 10-րդ օրացուցային օրը ներառյալ ընկած ժամանակահատվածը:

3. Անգործության ժամկետը լրանալուն հաջորդող չորրորդ աշխատանքային օրը ծանուցել ՋԿ-ԳՀԾՁԲ-24/1-Ն ծածկագրով ընթացակարգի ընտրված մասնակիցներ **«ԲԻՄ ԻՆԺԵՆԵՐԻՆԳ» ՍՊԸ-ին, «ԴԵԼՏԱՇԻՆ» ՍՊԸ-ին, «Մոդուլ» ՍՊԸ-ին, «ՀԳՇՆ» ՍՊԸ-ին և «Շինմաստեր» ՍՊԸ**-ին՝ ներկայացնելով պայմանագիր կնքելու առաջարկը և պայմանագրի նախագիծը:

Հանձնաժողովի հաջորդ նիստի անցկացման օրը, ժամը և վայրը հաստատելու մասին:

Գնահատող հանձնաժողովի հաջորդ նիստ հրավիրել ըստ անհրաժեշտության, որը տեղի կունենա Ջրային կոմիտեի վարչական շենքում, հասցեն՝ ք. Երևան, Վարդանանց 13ա:

Ընդունվել է որոշում՝ կողմ - 5, դեմ-0
Գնահատող հանձնաժողովի՝

նախագահ	_____	Ա. Մխիթարյան
անդամներ	_____	Ս. Ասրյան
	_____	Է. Բաղալյան
	_____	Գ. Մանուկյան
	_____	Ն. Ավետյան
Քարտուղար	_____	Ս. Գալստյան